ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.09.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ԱՑ-ԷՍ-2018/128

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 07.09.2018թ. թիվ 01.1/26-3/16238-18 գրությամբ Ա/Ձ Արման Ասմանգուլյանին (այսուհետ՝ նաև Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 17.07.2018թ. թիվ 01-63-558 գրության հիման վրա, 07.09.2018թ. Ա/Ձ Արման Ասմանգուլյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը 17.07.2018թ. թիվ 01-63-558 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն դիպլոմները որպես հատուկ պաշտպանվածություն պահանջող փաստաթուղթ ձեռք բերելու համար հայտարավել է ՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնանշման հարցում: Արդյունքում հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ Ա/Ձ Արման Ասմանգուլյանը, որի մասին ՎՊՀ-ն և ՀՀ կրթության և գիտության նախարարությանը տեղեկացրել է թիվ 01-36-391 գրությամբ: Սակայն Ա/Ձ Արման Ասմանգուլյանի կողմից տպագրված նմուշը «ՀՀ Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ենթարկվել է փորձաքննության և տրվել է բացասական եզրակացություն:»:

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն հիմնադրամի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **<u>Ա/Ձ Արման Ասմանգուլյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 07.09.2018թ. գրությամբ դիմել է Ա/Ձ Արման Ասմանգուլյանին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.09.2018թ. թիվ 01.1/26-3/16238-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ա/Ձ-ի գրավոր կարծիք, սակայն վերջինիս կողմից որևէ կարծիք չի ներկայացվել:

Ա/Ձ Արման Ասմանգուլյանը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/128 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 07.09.2018թ. թիվ 01.1/26-3/16238-18 գրությունը, «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 17.07.2018թ. թիվ 01-63-558 գրությունը և կից փաստաթղթերը, ՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի և Ա/Ձ Արման Ասմանգուլյանի միջև 26.06.2018թ. կնքված N ՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնման պայմանագիրը, Պատվիրատուի կողմից Ա/Ձ Արման Ասմանգուլյանին ուղղված 02.07.2018թ. թիվ 01-68-506 և 29.08.2018թ. թիվ 01-68-627 գրությունները, «ՀՀ Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 13.07.2018թ. թիվ 63041801 փորձագիտական եզրակացությունը.

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի և Ա/Ձ Արման Ասմանգուլյանի միջև 26.06.2018թ. կնքվել է N ՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով՝ Գնորդին մատակակարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:
- 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:
- 2.1.7.1 կետի ա) ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:
- 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

- 2.4.5 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավատող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:
- 8.11 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ցանուցված՝ ծանուցումը պայմանագրի կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Ա/Ձ Արման Ասմանգուլյանը ՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով պայմանագրին կից Հավելված 10՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական հետևյալ հատկանիշները.

- Դիպլոմ 1՝ բակալավրի կրթական ծրագրի սովորական դիպլոմ՝ ՀՀ կառավարության 15.06.2000թ. «Կրթության պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը, ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմի) միասնական հավելվածի նմուշը հաստատելու մասին» թիվ 320-Ն որոշմանը համապատասխան: Չափը՝ 21,0x29,7 սմ,թուղթը պաշտպանված ջրանիշով, ՀՀ գրվածքով, գեյլոշիրային պաշտպանիչ ցանցով, իրիսային տպագրություն, ներառյալ դիպլոմի կազմը:
- Դիպլոմ 2՝ Բակալավրի կրթական ծրագրի գերազանցության դիպլոմ՝ ՀՀ կառավարության 15.06.2000թ. «Կրթության պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը, ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմի) միասնական հավելվածի նմուշը հաստատելու մասին» թիվ 320-Ն որոշմանը համապատասխան: Չափը՝ 21,0x29,7 սմ, թուղթը պաշտպանված ջրանիշով, ՀՀ գրվածքով, գեյլոշիրային պաշտպանիչ ցանցով, իրիսային տպագրություն, ներառյալ դիպլոմի կազմը:

- Դիպլոմ 3՝ Մագիստրոսի կրթական ծրագրի սովորական դիպլոմ՝ ՀՀ կառավարության 15.06.2000թ. «Կրթության պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը, ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմի) միասնական հավելվածի նմուշը հաստատելու մասին» թիվ 320-Ն որոշմանը համապատասխան: Չափը՝ 21,0x29,7 սմ,թուղթը պաշտպանված ջրանիշով, ՀՀ գրվածքով, գեյլոշիրային պաշտպանիչ ցանցով, իրիսային տպագրություն, ներառյալ դիպլոմի կազմը:

- Դիպլոմ 4՝ Մագիստրոսի կրթական ծրագրի գերազանցության դիպլոմ՝ ՀՀ կառավարության 15.06.2000թ. «Կրթության պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը, ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմի) միասնական հավելվածի նմուշը հաստատելու մասին» թիվ 320-Ն որոշմանը համապատասխան: Չափը՝ 21,0x29,7 սմ, Թուղթը պաշտպանված ջրանիշով, ՀՀ գրվածքով, գեյլոշիրային պաշտպանիչ ցանցով, իրիսային տպագրություն, ներառյալ դիպլոմի կազմը:

- Դիպլոմ 5՝ Միջին մասնագիտական կրթական ծրագրի (քոլեջի) սովորական դիպլոմ՝ ՀՀ կառավարության 15.06.2000թ. «Կրթության պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը, ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմի) միասնական հավելվածի նմուշը հաստատելու մասին» թիվ 320-Ն որոշմանը համապատասխան: Չափը՝ 21,0x29,7 սմ, թուղթը պաշտպանված ջրանիշով, ՀՀ գրվածքով, գեյլոշիրային պաշտպանիչ ցանցով, իրիսային տպագրություն, ներառյալ դիպլոմի կազմը:

- Դիպլոմ 6՝ Միջին մասնագիտական կրթական ծրագրի (քոլեջի) գերազանցության դիպլոմ՝ ՀՀ կառավարության 15.06.2000թ. «Կրթության պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը, ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմի) միասնական հավելվածի նմուշը հաստատելու մասին» թիվ 320-Ն որոշմանը համապատասխան: Չափը՝ 21,0x29,7 սմ, թուղթը պաշտպանված ջրանիշով, ՀՀ գրվածքով, գեյլոշիրային պաշտպանիչ ցանցով, իրիսային տպագրություն, ներառյալ դիպլոմի կազմը:

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը Ա/Ձ Արման Ասմանգուլյանին 02.07.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ձեր կողմից ներկայացված դիպլոմի օրինակը չի համապատասխանում ՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնման պայմանագրով սահմանված տեխնիկական չափանիշներին:»:

«ՀՀ Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 13.07.2018թ. թիվ 63041801 փորձագիտական եզրակացության համաձայն՝

«Ա/Ձ Արման Ասմանգուլյանի կողմից ներկայացված դիպլոմի ձևաթուղթն ունի հետևյալ հատկանիշները՝ տպագիր գրառումները և զարդանախշերը պարզ և հստակ չեն արտահայտված, տպագիր գրառումները և զարդանախշերի էլեմենտներում գունային անցումները հստակ չեն կատարվում՝ նկատվում է աղավաղվածություն, գեյլոշիրային պաշտպանիչ ցանցը բացակայում է, թափանցող ճառագայթների ներքո ի հայտ չի գալիս ջրանշանը (ջրանշանը հանդիսանում է պաշտպանիչ հատկանիշ, որը ներդրված է թղթի մեջ,) հատուկ ձև ունեցող շրջանակների մեջ կատարված «ՀՀ» հապավումները չեն հանդիսանում ջրանշաններ՝ դրանք տպվել են անմիջականորեն ձևաթղթի վրա, ուլտրամանուշակագույն ճառագայթների ներքո ի հայտ չեն գալիս պաշտպանական հատկանիշներ, ձևաթղթի ամբողջ մակերեսով քաոսայնորեն դասավորված մանրաթելերի տեսք ունեցող պատկերները չեն հանդիսանում ձևաթղթի մասը, այլ տպվել են ձևաթղթի վրա, ձևաթղթի վրա չկան միկրոգրառումներ:

Համեմատելով փորձաքննությանը տրամադրված դիպլոմի ձևաթղթի նմուշի օրինակը 26.06.2018թ. կնքված N ՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնման պայմանագրին կից տեխնիկական բնութագրի հետ պարզվեց, որ այն չի համապատասխանում N ՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնման պայմանագրին կից տեխնիկական բնութագրի պահանջներին:»:

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը 29.08.2018թ. գրությամբ Ա/Ձ Արման Ասմանգուլյանին հայտնել է հետևյալը.

««Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի և Ա/Ձ Արման Ասմանգուլյանի միջև 26.06.2018թ. կնքված N ՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Ա/Ձ Արման Ասմանգուլյանը

պարտավորվում է մատակարարել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների պետական նմուշի դիպլոմ: Սակայն Ա/Ձ Արման Ասմանգուլյանի կողմից ներկայացված դիպլոմի նմուշը «ՀՀ Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ենթարկվել է փորձաքննության և տրվել է բացասական եզրակացություն: Այն չի համապատասխանել պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 կետի ա) ենթակետով՝ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը միակողմանի լուծում է Պայմանագիրը:»:

Միաժամանակ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը N ՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնման պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունը 30.08.2018թ. հրապարակել է www.procurement.am կայքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ

- Ա/Ձ Արման Ասմանգուլյանի կողմից տրամադրված դիպլոմի ձևաթղթի նմուշի օրինակը չի համապատասխանում Պայմանագրով նախատեսված մատակարարման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

- Ա/Ձ Արման Ասմանգուլյան 29.08.2018թ. պատշաճ ծանուցվել է 26.06.2018թ. կնքված N ՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, ինչպես նաև պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակվել է www.procurement.am կայքում:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ա/Ձ Արման Ասմանգուլյանը, Պայմանագրով նախատեսված մատակարարման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրին համապատասխան դիպլոմի ձևաթղթի նմուշ չներկայացնելով՝ խախտել է 26.06.2018թ. կնքված N ՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/9 գնման պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունն, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ա/Ձ Արման Ասմանգուլյանին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.09.2018թ. թիվ 01.1/26-3/16238-18 գրությամբ Ա/Ձ Արման Ասմանգուլյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. Ա/Ձ Արման Ասմանգուլյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**